

28

ՊԵՐԵԼ ԹԵՂՈՎԻՔԵՆ

Victus

vos
salutat

ԹԻՖԼԻՑ

Տպարան ՇՀԵՐՄԵԾՈՒ ԴՐԱՅԻՆԿԱՅԵՆ ԳՈԶ. 8

891.99

1912

Մ-27

L 671
891.39
U-27 2060 W. R. G.
08 OCT 2010
ՄԻԳԱՅԻ ՄԸՆՈՒԹԵԲՆ

Y I C T U S

Y O S

S A L U T A T



ԹԻՖԼԻՍ
Տպարան ՀՀԵՐՄԵԽԱ Գրաֆոկային փող. 6

1912

24 JUN 2013

42065

24 NOV 2011

ՕՐ. ԱՍԽԵՑԻ ՅԵԶԵՏԱԿԻՆ

Այժմ՝ է որ կասեմ...
Այժմ՝ դու էլ չես լսիլ—
Սիրում՝ եմ քեզ:

Ինձ ասացին, որ դու մեռաք
Հրէշատը սուս:
Դու ապրում ես, դու կապրես,—
Իմ սիրտս է—որ մեռաւ:

Մ. Մ.



4488 - 2010

Նւեր բոլոր կանանց որոնց եւ
սիրել եւ մի տարի, մի ամիս, մի
օր, եթէ մինչեւ անզամ մի ժամ:



Ես շատերին սիրեցի, բայց ոչ ոքի չը սիրեցի:
Զեզ էլ չեմ սիրել, ծեզ որ նվիրում եմ այս
երգերը.

Նքան, որին ամբողջ կեանքս երազեցի—չ'եկաւ:
Չեր սէջ ես նրան էի վնտրում՝—չը գտայ.
Այժմ լրած, յովնած, ճանճրոյթը հոգումն, նախ
քան յափտեան փակեմ աչքերս, կարապի պէս ես էլ
իմ երգս եմ երգում:

Ո՞վ զիտէ ինչ եղաք դուք. ես ծեզ կորցըի իմ
կեանքի սեւ ճանապարհին:

Ուր էլ որ լինէք, ինչ էլ որ լինէք, մայր, պա-
ռաւած աղջիկ, պոռնիկ թէ բարեգործ, հարուստ թէ
աղքատ—այդ մինմոյն է, ծեզ իմ նվիրում անխտիր
իմ այս երգերը.

ՆԵԳՐԸ ԵՒ ԵՍ

Նւեր օր. Բ.-ին.

Չեմ յիշում երբ էր, քանի տարի առաջ,
բայց վաղուց էր, շատ վաղուց:

Նա միշտ նստած էր իւր տան դռան առջև,
արեկի տակը տաքանում էր. նա փաթաթւած էր
տաք վերարկուի մէջ, բայց գարնան արել նրա
պաղած արիւնը չէր կարողանում ջերմացնել:

Ժամերով նստած էր արեկի տակ, բայց չէր
տաքանում:

Այնքան մոայլ ու տխուր էր նրա գէմքը:
Ես երբէք նրան չեմ մօռանալ. Սև դէմքի վրայ,
ճերմակած գանգուր մազերը, աւելի էին խտաց-
նում նրա թշւառութիւնը. նա յիշեցնում էր մայր
երկրից խլած տրօպիք բոյսի, որ խամրում, մեռ-
նում է հեռու հիւսիսում: Նա արեկի տակ նստած
երազում էր իւր երկրի տաք արել... Ո՞վ գիտէ
բաղդի որ քմահաճոյքովն էր նա ընկել այս ցուրտ
երկրը:

Ես նրան ամեն օր տեսնում էի իւր գուան
առաջ կծկւած:

Մի շաբաթից աւելի է, որ նա այլևս չկար.
տուն գնալուց էլ չէի հանդիպում նրան:

Նա մեռաւ:

Այնքան չը տաքացաւ, որ վերջը մեռաւ:

ԶՄԵՐՆԱՄՈՒՏ

Նւեր օր. Ն. Փ. Ք. Բ.

Յիշնում ես ինչ լաւ էր ամառը:

Յիշնում ես այն օրը, երբ ես եկայ քեզ
մօտ և բարձրացանք սարը՝ լուսնի ծագելը տես-
նելու:

Յիշնում ես ինչ վեր էինք բարձրացել:

Յիշնում ես, դու յոգնել էիր և թէքել սփ-
րուն զլուխդ դէպի ուսս. ինչ արագ էին բարա-
խում մեր սրտերը:

Ես քեզ առաջին անգամ այնտեղ համբու-
րեցի:

Յիշնում ես, իմ համբոյրը. թէ շատ սովորական
բան էր քեզ համար և ուրիշ համբոյրների նման
մոռացւեցին:

Դու երկի մոռացել ես ինձ: Իսկ ես ահա
փակւած եմ իմ փոքրիկ սենեակում և քո մասին
եմ մտածում:

Այնպէս ճնշող լոռւթիւն է տիրում... Հա-
րևան սենեակը, որտեղից միշտ այնպէս աղմուկ
է լսում—այնտեղից էլ այսօր ոչ մի ձայն չկայ:

Մուկը եռանդու կերպով կրծում է յատակի
տախտակները, կարծես մի մեծ նպատակի հա-
մար... Լուռ հետեւում եմ այդ ձայնին... Աչքերիս
առաջն է այդ փոքրիկ կենդանին իւր սպիտակ,
սուր, փոքրիկ ատամներով՝ որոնցով նա կրծում է:

Մեղ մօտ այժմ յասմիկը ծաղկել է, վարդերը
բացւել, ծառերը կանաչել, թռչունները ուրախ
երգում են... Իսկ այստեղ դեռ ցուրտ է... ցուրտ...

Այժմ որ հեռացնել եմ իմ հայրենիքից, ես
աւելի լաւ եմ հասկանում, աւելի յաճախ եմ
յիշում այն ծերացած նեղորին, որը չը տաքացաւ
իմ հայրենիքում ու մեռաւ:

Ես հիւանդ եմ: Այս սառը արեկի տակ ես էլ
չեմ կարողանում տաքանալ... Համբուրիր աւելի
ջերմ, թէ չէ կը սառչեմ...

Իմ հայրենիքում այժմ ամեն ինչ ծաղկել
է, և խնձորէնին և կեռասէնին, արեք պայծառ է
ու տաք, երկինքը կապոյտ՝ քո աչքերի պէս: Եթէ
չը լինէիր դու, այս մառախլապատ ցուրտ երկրում
ես կը սառչէի, կը խամբէի:

Դէ, համբուրիր. քո սէրը ինձ մոռացնել է
տալիս իմ հայրենիքի գարունը, քո հայրենիքի
բուրն ու ցուրտը...

Համբուրիր... Համբուրիր... Ես կարօտ եմ
տաք արեկ... Դու ես իմ արեք, համբուրիր...
համբոյրներով ջերմացրու ինձ, թէ չէ առանց
արեկի կը մեռնեմ... Նայիր ինչ դժգոյն եմ, ինչ
գունատ... Համբուրիր... Յիշիր այն թշւառ նեղ-
որին և համբուրիր:



Պատուհանի փեղկերը փակ են, բայց էլի
լսելի է սառը, ձիւնախառն անձրեի ձայնը, որ
թակում է ապակիները...

Քամին շաչում է, ոռնում պատուհանիս մօտ:

Փակում եմ աչքերս, ականջներս, որ էլ
չը լսեմ այդ ձայները, ուզում եմ մոռանալ, որ
գուրսը ցուրտ է... Մուկը կըծում է տախտակը,
նա չանգրտում է...

Դու երբէք չես եղել այդ գրութեան մէջ:
Երբէք չես լսել այդ ձայները: Երբէք չես զգա-
ցել գարնան ծաղկի կարօտ:

Փոքրիկ լամպը հազիւ լուսաւորում է սենեակը,
անկիւնները մութ են, ստւերները դողում են,
մեծանում ու փոքրանում, այլանդակ ձևեր են
ստանում:

Տերեները արդէն թափւել են, մի քանի օր
էլ և գետինը կը ծածկվի ձիւնով: Գուցէ հէնց վաղը,
երբ բանամ պատուհանիս փեղկերը, արդէն ա-
մեն ինչ ծածկւած կը լինի ձիւնով: Գուցէ հէնց
այժմ էլ սպիտակել է...

Ես վեր կացայ, վաղեցի դէպի պատուհանը...
Բայց վախեցայ բանալ...

Յանկարծ ես զգացի մի այնպիսի կարօտ
տաք արևի, գարնան, ծաղկի, քիչ էր մնում
ճշայի... Ինչպէս մի երես տւած երեխայ, որը
յանկարծ զարթնել է գիշերւայ կէսին, մի բան
է յիշել և սկսել է լալ, գոռալ, ոտները գետնին

Խփել, պահանջել որ տան իւր ուզածը: Այնպէս
էլ ես էի ուզում լալ, պահանջել, որ բնութիւնը
ծաղկի, ծաղիկները բացւին:

Ի՞նչ ցուրտ է, ցուրտ ու խոնաւ:

Իսկ ես ինչպէս կարօտ եմ արևի, տաք-
պայծառ արևի: Ես խեղդւում եմ... այս ցուրտ
ձմեռնամուտը խեղդում է ինձ:

Գուցէ դու մօտս լինէիր, ես այսպէս մենակ,
դժբախտ ըլլինէիր...

Գուցէ դու ես իմ գարունը՝ որ չկաս, որ
հեռու ես...

Գուցէ ես քեզ եմ կարօտ...

Յիշում ես ինչ լաւ էր ամառ:



ԹԻԹԵՌՆԻԿԻ ՄԱՀԸ

ՕՐ. Ե.-Ի ՂԻՉԵՏԱԿԻՒՆԻ.

Մի պայծառ առաւօտ էր, երբ նա փշրեց
իւր վանդակը և տեսաւ լոյսը:

Այնպէս տաք ու պայծառ էր այն առաւօտը
երբ ծնւեց նա:

Ծնւեց ծաղիկների ծոցում, որոնք այնպէս
թարմ էին, այնպէս անուշահոտ:

Նա ողջունեց արևի պայծառ ճառագայթ-
ները և առաջին շողերի հետ ինքն էլ արբեցած,
զլուխը կորցրած ծաղկից-ծաղիկ էր թռչկոտում,
ծծում էր կեանքը լի սրտի հրձւանքով և փառա-
բանում էր արևը, օրհնում կապոյտ փիրուզէ
երկինքը:

Ծաղիկները ողջունում էին նրան, նա ժըպ-
տում էր ամենքին, ժպտալով համբուրում էր,
համբուրում, և նրան թւում էր, դա վերջ չունի...

Լի կեանքի տեսչով, անհոգ ու գլարթ նա
թռչկոտում էր ծաղկից ծաղիկ. ծաղիկները ժըպ-
տում էին նրան...

Նա համբուրում էր ծաղիկները:

Նա սիրեց և սիրւեց ծաղիկների մէջ,
վայելեց սիրոյ բերկրանքը ծաղիկների ծոցում:

Նա տեսաւ արևը, որին ձգտում էր դեռ
լոյս չը տեսած... և օրհնեց արևը. Ծաղիկները բա-
ցեցին իրանց կոկոները, թռչունները լցրին օդը

Երանց դայլայներով: Վայրկեանները անցնում էին
և իւրաքանչիւր վայրկեանի հետ նա աւելի ու-
ժեղ էր զգում կեանքի քաղցրութիւնը և օրհ-
նում էր կեանքը:

Ամբողջ կեանքը դեռ նրա առաջին է:
Դեռ ութ ժամ կար մինչև արևը կը մտներ
ու մութը կը պատեր, մինչ ծաղիկները կը փակէին
իրանց հիւրնըկալ, փափուկ թաւշեայ անկողին-
ները և նա հրաժեշտ կը տար իւր անփոյթ կեանքին:

Դեռ հեռու է մութը:
Նա արբեցած է ծաղիկների բուրմունքից,
արևի ճառագայթներից:

Նա չը նկատեց ինչպէս յանկարծ արևը մտաւ
ամպերի ետևը, չը նկատեց ինչպէս հորիզօնը ծած-
կըւեց ու ու մութ ամպերով... Նա լսեց իրեն մի
անծանօթ ձայն, առաջ խուլ կերպով, հետզհետէ
որոշ ու որոշ...

Եւ դողաց թիթեռնիկի սիրտը: Նա սթափ-
ւեց իւր գինովութիւնից, նրա սիրտը կարծես
նախազգաց մօտակայ փոթորիկը...

Եւ տիրեց թիթեռնիկի սիրտը...
Նա կանգ առաւ մի ծաղկի վրայ, թա-
փահարեց սպիտակ, լայն թևերը ու մնաց անշարժ:

Փոթորիկը փշեց նրա թևերը...

Նրա նուրբ թևերը և նա ընկաւ...

Փոթորիկը խլեց նրա թևերը....

Իսկ երբ արել նորից դուրս եկաւ ամպերի տակից, երբ թարմացած ծաղիկները ժըպտացին, նա ընկած էր ցեխի մէջ... սպիտակ թևերը ցեխուած... նրա մօտ սողում էր կանաչ որդը:

Միջատները դուրս սողացին իրանց քներից, թռչունները նորից սկսեցին իրանց ուրախ երգը... Բոլորն էլ ողջունում էին արել, պայծառ տաք արել:

Նա ընկած էր փշուած թևերով:

Նա ուշքի եկաւ, շարժեց իւր հիւանդ, թոյլ ոտները, բայց չը կարողացաւ շարժել իւր թրջւած թևերը, ցնցոտի դարձած թևերը: Նա ընկած էր ցեխի մէջ և էլ ոյժ չունէր... Նա էլ չէր կարող ճախրել արելի ճառագայթների հետ՝ ծաղիկների մէջ:

Արել կամաց-կամաց մայր էր մտնում... Նա զգաց, որ իր կեանքի թելը կտրւում է:

—
Եւ արշալոյսին, երբ ծաղիկները նոր էին բանում իրանց կոկոնները, ցողը մարգարտի պէս փայլում էր նրանց թերթիկների վրայ, նրանք խոնարեցին իրանց սիրուն գլուխները և տեսան անշնչացած թիթեռնիկին, իրանց սիրելին

և լաց եղան, և մարգարիտ արցունքները ընկան նրա դիակի վրայ և էլ իսկոյն մոռանալով իրանց վիշտը, նորից բարձրացրին գլուխները և ողջունեցին նոր առաւտուը, նոր թիթեռներին, որոնք խայտում էին իրանց շուրջը, որոնք գուցէ աւելի շաղղաւոր լինին, քան այս մէկը, որ ընկած է իրանց ոտների մօտ... Որ ծնւեց այն գեղեցիկ արշալոյսին, և չողջունեց մի նոր արշալոյս:



Ա Յ Ո Ւ Ն

Նւեր օր. Վ. - ին.

Այս տարի ինչ շուտ սկսեց աշունը:

Մենակ եմ պարտիզում, տերևները դեղնել ու թափում են այն ծառերից, որի շւաքի տակ երբեմն նստած էինք քեզ հետ:

Բոլորովին մենակ եմ. քամին վշշում է դեղնած տերևների մէջ, տերևները պոկում են և դեղին թիթեռնիկների նման ընկնում ոտներիս մօտ: Ինչ տխուր, յուսահատւած են ընկնում դեղնած տերևները: Քամին քշում է նրանց, խրփում պատերին:

Կը թափւեն ու կը թաղւեն ձիւնի տակ: Ինչ մահւան դալուկ է պատել պարտէզի ծառերին, անտառին՝ որ այնպէս ժպտում էին գարնանը:

Աշնանը չի կարելի նստել այստեղ:

Խելօք են նրանք, որ գնացին և չը տեսան այս տխուր տերևաթափը:

Կը լաս, եթէ տեսնես այն ծառերը, որոնց հովանիի տակ նստած էինք մենք, այնպէս դալուկ, տերևազուրկ:

Քամին քշում է, ցրում պարտիզում: Եւ մեր սիրոյ վկայները մէկիկ-մէկիկ ընկնում են:

Ի՞նչ լաւ է, որ այսպէս է: Ոչ մի վկայ չի մնայ քո սիրոյ խօսքերին: Զէ որ մինչև միւս գարուն դու բացի ինձնից էլի մի բանիսին կը սիրես:



ՆԵԱՐԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ

Նւեր օր. Ա. - ին.

Նոր եմ տեղափոխւել այս սենեակը և ունեցածս լուսանկարներով զարդարել եմ պատերը:

Թոնը գեղեցիկ շրջանակի մէջ արդէն գլորասեղանիս վրայ է. մի զրասեղան, որի առաջ չի կարելի մի տառ անգամ գրել, թէկուզ ալֆաւիտի և քո անւան առաջին տառը՝ «Ա»:

Ծիծաղելի զրասեղան է:

Թանաքամանում թանաքը չորացել է, մատիտ էլ չկայ, էլ ինչ զրասեղան, քանի որ չի կարող իւր կոչմանը ծառայել:

Թէկ գիշերւայ մէկից անց է, բայց քունս չի տանում. ուզում եմ գրել. ինչպէս բանաստեղծներն են ասում — «Մուսաս եկել է»:

Ուզում եմ գրել. թէ ինչ ինքս էլ չը գիտեմ: Թանաք չկայ. այդ հանգամանքը աւելի է զըռգուում գրելու ցանկութիւնս և ինձ թւում է մի հանճարեղ բան պիտի գրեմ... գեղեցիկ... աւելի գեղեցիկ, քան՝ արշալոյսը, աւելի շոյող, քան՝ մանուշակներով սփուած մարգագետինը, աւելի մեղմ, քան՝ աստղազարդ երկինքը... գեղեցիկ, այնքան գեղեցիկ, որ դժւար է նկարագրել, — և նւիրեմ քեզ:

Ես կարծում էի թէ թոքերս են հիւանդ:

Բայց այսօր բժիշկը քննեց և ասաց, որ

սիրտս է: Թէկ լաւ չը հասկացայ թէ ինչ է այդ
սրտի ներւողը, բայց դա շատ հաւանական է:

Երբեմն ինձ թւում է թէ, որ նա, այսինքն
սիրտս, այլևս չի բարախում. ես վեր եմ թոշում
քնից և վախից քիչ է մնում ճշամ, բայց զգում
եմ, որ նա էլի սկսեց բարախել և հանգստացած
խոր շունչ եմ քաշում և ուրախանում որ դեռ
չի պայթելու արիւնը նորից սկսում է կանոնա-
ւոր հոսել երականերիս մէջ և զգում եմ մի
դուրեկան ջերմութիւն,

Բայց որ մի օր կը պայթի, այդ անպայման է:

Այ, այս բոպէիս այնպէս է ճմլում կը ծքիս
տակ, որ քիչ է մնում լամ, աղաղակեմ:

Եթէ կարողանամ լալ, ինչպէս կը թեթևանամ
այն ժամանակ. այն ժամանակ ես արիւնով էլ
լինի կը գրեմ այն, ինչ ուզում էի:

Բժիշկը կարծում է, որ նեարդերս էլ են
շատ թուլացել և լուրջ բժշկութիւն է պէտք...
Դատարկ բան է, բայց այս հիւանդութիւնը ինձ
թւում է աւելի լաւ կը լիներ անւանել սիրացաւ,
ինչպէս օրինակ բարակացաւ, որովհետեւ ինձ
թւում է՝ եթէ դու մօտս լինիս ես միանգամայն
առողջ կը լինիմ:

Թանաքի մէջ գինի խառնեցի՝ սև թանաքի
պէս գինի, ստացւեց մի ինչ որ անորոշ գոյնի
թանաք և գրում եմ այդ գինեխառ թանաքով.
Թէկ յիմարութիւն է արածս, շարունակ գինու
հոտ է փչում...

Լաւ է որ գինեմոլ չեմ:

Մտքերս չեմ կարողանում կենդրոնացնել,
երկի գինու հոտիցն է, որ շարունակ գինետուն
է յիշեցնում:

Ա—Ա—. ուղեղիս մէջ մեխի պէս ցցւել է
քո անունը, շարունակ կրկնում եմ, կարծես վա-
խենում եմ մոռանալ:

Ինչ յիմարութիւն էր գնալ բժշկի մօտ...

Երբ ամեն անգամ մի քիչ անկանոն է բա-
րախում սիրտս, գունատած վեր եմ ցատկում
և բոնում բազկերակս, լուռ ուշադիր հետեւում
եմ նրա ամեն մի զարկին... Նախ քան բժշկի մօտ
գնալս այսքան չէի վախենում... Ինչ յիմարութիւն
արի... չը գիտէի հիւանդութեանս անունը. բայց
միթէ դա կարևոր էր. առանց հիւանդութեան
անունը իմանալու կարծես չի կարելի մեռնել...

Գինու հոտը շատ է խանգարում...

Եթէ մի ուրիշ թանաք լինէր:



ինձ թւում է, որ երկար չի տեիլ և նա
կը դադարի բարախելուց. գուցէ սա նեարդային,
հիւանդ մի վախ է,—բայց ես վախենում եմ:

Ա—. երբ դու վեռադառնաս և արդէն ուշ
լինի, երբ նայողնած լինի բարախելուց ու դադ-
րած, այն ժամանակ պատւիրիր մի փոքրիկ սո-
սենու դագաղ, դիր նրա մէջ սիրտս, ամուր փա-
կիր խուփը և տար այդ փոքրիկ դագաղը ծովի
վրայով 0—. գիւղը:

Այդ գիւղում ապրում են աբխազները,
նրանք այնքան լաւ են սգում իրանց կորուստը:
Գիտես որտեղ է այն 0—. գիւղը:

Սև ծովի ափին. ճանապարհածախսն էլ թանդ
չէ, դու էլ շատ չես յոգնել:

Տար այդ փոքրիկ դագաղը, դիր 0—. գիւղի
ամենաբարձր մի տեղում և կանչիր գիւղի աբ-
խազ և մինդրէլ կանանց:

Նրանք այնպէս լաւ գիտեն ողբալ...

Նրանք այնքան լաւ են պատմում:

Դու նրանց կասես, թէ ում սիրտն է այդ
դագաղում. նրանք ճանաչում են ինձ. մի ամիս
ապրել իմ նրանց հետ՝ այդ գիւղում:

Գիտես այդ երբ էր, Օգոստոսի 16-ին, երբ
դու գնացիր:

Ես էլ գնացի ըս ետեկց. Ուր էի գնում
ինքս էլ չը գիտէի. միթէ միւնոյնը չէ թէ ուր,
առանց քեզ միթէ միւնոյնը չէ. Նաւի վրայ ո-

ըոշեցի իջնել այդ գիւղում, ուր ոչ մի ծանօթ
չկար՝ որ ծիծաղէր կամ խղճար վիշտս տեսնելով:

Կանչիր գիւղի կանանց, միայն նրանք են
տեսել, տեսել են ինչպէս խելագարի պէս թա-
փառում էի անտառներաւմ և ինչպէս ամեն տեղ
քեզ էի փնտրում:

Նրանք գիշերները վեր են ցատկել քնից,
լսել են ճիչս, որ քեզ էր կանչում:

Ծովն էլ գիտէ այդ բոլորը:

Դու նրանց չասես թէ ով ես դու, գիտեն
քո անունը, չասես,—թէ չէ կանիծեն քեզ:

Դու կը լսես նրանցից թէ ինչ է կըել այդ
փոքրիկ դագաղի մէջ փակւած սիրտս... Նրանք
այնքան լաւ գիտեն պատմել, սգալ, ու սուգ
անելով պատմել...

Կանչիր գիւղի կանանց, ասա նրանց, որ
չը գտաւ նրան, որին սպասում, փնտրում էր և
մեռաւ:

Նրանք այնպիսի մի վայնասուն կը բարձրաց-
նեն, որ մազերդ կըփշաքաղւեն, աչքերդ կոլոր-
վեն իրանց տեղերում, սիրտդ կը ճմլւի կրծքիդ
տակ և դու կը լսա նրանց հետ...

Նրանք այնքան լաւ գիտեն ողբալ իրանց
կորուստը:

Բայց ես ինչպէս կուզենայի մի անգամ
էլ տեսնել քեզ:

Վերջին ամիսը, որ ես գանւում էի Սև ծովի

ամին, այնքան եմ տանջւել առանց քեզ... Ոչ ոք
մեր ծանօթներից չի տեսել, միայն նրանք էին
արխագները, որոնք խղճալով նայում էին ինձ:

Նրանք քեզ չեն ճանաչում, բայց գիտեն
քո անունը...

Քո անունը թող լինի թէհան... Նարգիս...
ինչ կուղես, բայց ոչ Ա—. նրանք լաւ գիտեն
այդ անունը և կանիծեն քեզ:

Խոստացիր Ա—. եթէ մեռնեմ տար այնտեղ:
Նրանք այնքան լաւ են ողբում իրանց կորուստը:

Մի քանի ըոպէում ամբողջ գիւղը կը հաւաք-
փ, հերիք է եթէ առաջին հանդիպած կնոջը ա-
սես անունս: Նա այնպէս կը ճշայ, որ, գիւղի ա-
մենահեռաւոր ծայրերում կը լսի նրա ճիչը:

Բոլորը կը հաւաքւեն... նրանք կը փետեն իրանց
մազերը, կը չանգրտեն դէմքները, կը նկնեն գետ-
նին և կը սկսեն հող տալ գլխներին:

Ա—. Ա—. տատրակս, դու չանես, մազերիդ
սանրւածքը կը փչանայ... նրանք սուտ են, նրանք
էլ քեզ չափ են զգում..., զգում են այնքան, որ-
քան կարող է զգալ մի կին... Դա սովորութիւն
է, ծէս... սգալու ձե... Դու չանես, չը չանգրտես
քո ձիւնի նման սպիտակ հարթ մարմինդ...
նրանք էլ կին են քեզ պէս, միայն ողբալու ձեն
է ուրիշ: Նրանք աղմուկ աւելի են բարձրացնում,
բայց զգում են գուցէ քեզանից էլ քիչ:

Վերջապէս դու հօ չես տեսել ինչ է կրել
սիրտս առանց քեզ:

Նորից կը կնում եմ, չը հաւատաս նրանց...
իսկ ամենագլխաւորը չասես նրանց քո անունը,
նրանք կանիծեն քեզ:

Չմոռանաս Ա—. տար ինձ Սև ծովի ափում
գտնող Օ—. գիւղը. կանչիր աբխազ և մինդրէլ
կանանց, թող նրանք լան ինձ վրայ... նրանք
այնքան լաւ գիտեն ողբալ իրանց կորուստը...

Ընդմիջումներին պառաւ տանտիկինս, որը
շատ սիրում էր ինձ, որը շատ բան գիտէ, շատ
բան է տեսել կը պատմի քեզ իմ վիշտը այնպիսի
խուլ ձայնով... Նա ճախարակի պէս, շարունակ
միալար, կը պատմի բոլորը՝ ինչ դու չը գիտես...

Բայց ես ինչպէս կուզենայի մի անգամ
էլ տեսնել քեզ:



Նւեր օր. Բ. Ա.-ին.

Երբ կը դադարի այս անձրեւը չը գիտեմ, երեւ
վաղը, կամ միւս օրը. միւնոյն է, մի օր հօ
դադարելու է:

Գիտեմ, որ կը դադարի. բայց ինձ թւում է,
որ անվերջ է շարունակելու, որ էլ երեք, եր-
բէք արեկի երես չեմ տեսնելու:

Եւ քիչ է մնում լամ:

Նոյն գրութեան մէջ էի երբ կորցրի քեզ:
Ես գիտէի, որ այդ էլ կանցնի, ես գիտէի, բայց
լալիս էի. Ինձ թւում էր, թէ էլ երեք սիրել
չեմ կարող, որ այդ իմ վերջին սէրն էր և յու-
սահատւած մազերս էի փետում:

Ինչպէս կարող եմ ապրել առանց սիրոյ:
Սէրն է, որ չի թողնում մեռնի կեանքը. Առանց
սիրոյ ինչիս է պէտք փառք, հարստութիւն,
կեանք... Սիրոյ համար է, որ ձգտում եմ փառքի,
սիրոյ համար եմ ձգտում հարստութեան:

Դու իմ վերջին սիրած աղջիկ, մռայն աչ-
քերով, գունատ դէմքով. քեզ համար է, որ ու-
զում եմ ապրել...



ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

Նւեր օր. Ս. Ղ.-ին.

Ես դեռ չեմ մոռացել, երեկ երբէք էլ չեմ
մոռանալ այն զգեստը, որ դու հագած էիր այն
օրը. բաց-դեղին, որ էլեքտրական լոյսի տակ
համարեա սպիտակ էր:

Ես այժմ էլ յիշում եմ. ինչ վայելում էր
քեզ այն զգեստը:

Երբ ես մտայ, իսկոյն սկսեցի քեզ փնտրել:
Ինչքան բազմութիւն կար, աղմուկ, իրարանցում:
Դահլիճից երաժշտութեան ձայներ էին գալիս,
բայց չը գիտեմ ինչ էին նւագում:

Վերջապէս գտայ քեզ... ահա թէ ուր ես:
Դու կանգնած էիր վիճակախաղի մօտ:

Երբ ինձ տեսար ժպտացիր. ինձ թւաց թէ
դու ուրախացար... ինչո՞ւ ժպտացիր:

Այժմ դու չկաս ինձ համար, իհարկէ դա
միանգամից չեղաւ, այլ կամաց-կամաց... Այժմ
վերջնականապէս բժշկւած եմ քեզանից, քո սի-
րուց... Այժմ լաւ եմ, այլևս չեմ տանջւում, բայց
միշտ յիշում եմ և չեմ մոռացել ոչ քո զգեստը
բաց-դեղին, ոչ էլ քո ժպտացիր:

Ես կարծեմ քո ժպտակ վրայ էի սիրահար-
ւած: Երբ դու ժպտում էիր, ինձ թւում էր թէ

Ես թեր ունիմ և կը թոշեմ եթէ ուզենամ: Երբ
ես մօտեցայ քեզ, դու ուրախ մեկնեցիր ձեռքդ
և ասացիր՝ «փորձեցէք ձեր բաղդը». այնքան յի-
մար էի այն ժամանակ, որ չը հասկացայ, որ դու
ամենքի հետ պէտք է սիրալիր լինես, ամենքին
ժպտաս... Զէ որ քեզ դրա համար էին այդ տեղ
կանգնեցրել, որ քո ժպիտով մուտքը աւելացնես:

Ինձ ընկաւ խաղալիքներ, թէյի պարագաներ,
ինքնայեռ,—բոլորն էլ փայտից: Ես ուզեցի ետ
տալ. ինչիս էր պէտք... Բայց դու ասացիր՝
«պահեցէք ինձնից յիշատակ» և կօկէտութեամբ
աւելացրիր՝—«չը տաք ուրիշին»...

Ես երեխայի պէս ուրախացայ: Այժմ ամա-
չում եմ, որ այնպէս ուրախացել եմ... Դու գի-
տէիր, որ ես քեզ սիրում եմ յիմարի պէս, այդ
երեկի քեզ բաւականութիւն էր պատճանում: Զէ
որ կին ես:

Այն փայտի խաղալիքները ինձ համար դա-
ռան նւիրական բաներ. նրանք ինձ ամեն ըռպէ
քեզ էին յիշեցնում:

Բայց ինչ ուրախ եմ, որ քեզ չասացի թէ
սիրում եմ. ինչպէս երեկի կը ծիծաղէիր:

Ես երեխայ չէի, բայց քո ներկայութեամբ
այնպէս էի փոքրանում, ամեն մի հայացքիցդ
կարմրում էի. բայց ես 25-ըս անցրել եմ:

Ինքս ինձանից ամաչում էի, ինքս ինձ խօսք
էի տալիս, որ ես էլ հպարտ կը լինեմ քեզ պէս, որ

կարհամարեմ քո հպարտութիւնը, բայց բաւական
էր, որ հեռւից տեմնէի քնզ, յիմար սիրոս
սկսում էր այնպէս ամուր բարախել, այնպէս
նւաղել, որ ես մոռանում էի ամեն ինչ և նորից
դառնում քո ստրուկը... Ես ութը տարով մեծ
էի քեզանից, բայց վախենում էի, դու մի հա-
յցքով կարող էիր ինձ մահւան դատապարտել,
ես պատրաստ էի քո չնշին քմահաճոյքդ կատարե-
լու համար մեռնել:

Զէ որ ծիծաղելի է... Դու մի փոքրիկ գու-
նատ աղջիկ էիր, կիսարաց, մելամաղձոտ աշ-
քերով, բայց ես վախենում էի քեզանից:

Միայն այսօր, երբ չորս տարի է անցել, ես
կարողացայ այն խաղալիքները տալ ուրիշին...

Ինձ թւաց թէ մի ծանր բեռ ընկաւ ուսիցս:

Ես ուզում էի փշել նրանց, ինչպէս նրանք
փշեցին իմ ոսկէ անուրջները:

—
Դու այժմ թագուհու ես նման:

Չորս տարի ես ապրել էի հեռու քեզանից,
քեզանով, բայց այսօր ինձ տեսար փողոցում և չը
ճանաչեցիր, աւելի, ճիշտ, ձեացրիր թէ չը ճանա-
չեցիր:

Այսօր ես պատահմամբ անցայ ձեր տան
մօտով: Դա ձեր տունն է, դա քո՞ տունն է, դու
այդտեղ ես ապրում: Ես տեսայ քեզ պատժամ-

բում և դուն վրայ կարդացի քո նոր ազգա-
նունը: Ներիր: Ներիր, որ ես քեզ սիրել եմ:

Իմ սենեակը այնպէս փոքրիկ է, այնպէս
խեղճ ու մութ. չէի ցանկանալ, որ դու էլ պա-
տահմամբ անցնիս իմ տան մօտով և տեսնիս իմ
սենեակը. փողոցից երևում է:

Քոնը էլէքտրական լուսաւորութեամբ, ճոխ
զարդարւած, ամեն տեղ շքեղութիւն, փարթա-
մութիւն... իսկ իմը...

Միայն այսօր էր, որ տուն դառնալով նւի-
րեցի քո յիշատակը աղախնու երեխային. դա մի
փոքրիկ հիւանդ աղջիկ է, ութը տարեկան. նա
ուրախութիւրից մոռացաւ անգամ շնորհակալու-
թիւն յայտնել:

Չէ որ ծիծաղալի էր պահել քո յիշատակը
այս նեղ, մութ սենեակում...

Ներիր: Ներիր, որ ես քեզ սիրել եմ:



ՎԵՐՋԱԲԱՆ

Վայ ձեզ, որ յոզնեցիք դեռ չապրած, որ
կէս ճանապարհին մնացիք:

Վայ ձեզ, որ թառամեցիք չը բացւած և մի-
միայն կեանքի մօտով անցաք, միշտ երազեցիք
կեանքը, արել, բայց անարև մեռաք:

Վայ ձեզ, որ չը կարողացաք ընկճել կեանքը և
ընկճւեցիք:

Վայ ինձ, ես էլ ձեզ նման կէս ճանապար-
հին մնացի և այստեղ ճամբուս կէսին ցած եմ
դնում զէնքերս:

Ես չեմ կարող այլևս կուել...

Ես չեմ ուզում այլևս կուել:

Շատ բան տեսայ, շատերին տեսայ և
զարշելով մտածեցի—ինչ գոհ են այս հոգով աղ-
քատները, որոնց շոյել է կեանքը և գոհ են, որ
աւելի փոքրիկ գեռուններ կան, քան իրանք:

Վայ ձեզ, որ չը գիտէք ապրել ձեր հոգու
մէջ:

Վայ ձեզ, որ միմիայն սողալ գիտէք:

Ես թողնում եմ կեանքը—գարշանքը սրտումս,
բայց էլի չեմ մոռանում ձեզ, ձեզ որ սիրել եմ:

Դուք, որ իմ կեանքի մութ, դաժան օրերին
օազիս էք եղել,

Դուք, որ լոյսի մի ճառագայթ էք եղել իմ
կեանքի: անվերջ, մութ գիշերներին:

Դուք, որ յոդնած գլուխս մի ըսպէ գաղար
է առել ձեր կը ծքին,

Դուք, որ գէթ մի վայրկեան ինձ մոռա-
ցութեան էք տւել,

Դուք, որ շոյել էք իմ յոդնած գլուխը—
Օրհնեալ լինիք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0300956

42065

ԳԻՒՆ Է 15 ԿՈԴ.